ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. նոյեմբերի 14-ից նոյեմբերի 17-ը ք. Նյու-Յորք (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Աշոտ Մուրադյան - ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

Վահան Չարխիֆալակյան - ՀՀ ՊԵԿ Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Նյու-Յորք, նոյեմբերի 13ից 18-ը

3. Հրավիրող կողմը՝

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր, Ֆինլանդիայի և Նորվեգիայի կառավարություններ, Նյու Յորքի Կոլումբիա Համալսարան

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր՝ մասնակցել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Ֆինլանդիայի և Նորվեգիայի կառավարությունների, Նյու Յորքի Կոլումբիա Համալսարանի կողմից կազմակերպվող՝ «Հարկերի և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) վերաբերյալ երկխոսություն» ամենամյա միջոցառումը, ինչպես նաև հաջորդող արտաօրակարգային հանդիպումներին:

Մասնակիցներն անդրադարձել են հարկման և ԿԶՆ-ների միջև փոխհարաբերություններին, ինչպես նաև քննարկել առկա մարտահրավերները՝ գործուն լուծումների մշակման, միջառարկայական մոտեցումների վերհանման և նորարարական հարկային միջոցների ուսումնասիրման եղանակով:

5. Քննարկված թեմաները՝

Ս. թ. նոյեմբերի 14-ից 17-ը կայացած «Հարկերի և Կայուն զարգացման նպատակների վերաբերյալ երկխոսություն» ամենամյա միջոցառմանը, ինչպես նաև հաջորդող արտաօրակարգային հանդիպումներին քննարկվել են հետևյալ թեմաները.

- Սոցիալական պայմանագրի վերաձևավորում. հարկաբյուջետային քաղաքականություն, սոցիալական կառուցվածք և հարկային քաղաքականության ազդեցություն,

- Հարկման դերը տնտեսական գործընթացների կառավարման մեջ՝ համաշխարհային պարտքից մինչև տոկոսադրույքներ,
- ԿՀՆ-երի ֆինանսավորման համար հարկային լծակների կիրառումը,
- Կայուն հարկային վարչարարություններում ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը և ապօրինի ֆինանսական հոսքերի դեմ պայքարը,
- Հարստության, կապիտալի և սոցիալական պայմանագրերի հավասարակշռումը. առողջապահության և սոցիալ-տնտեսական կայունության համաշխարհային տեսլականը,
- ՁԼՄ-ների և լրագրության ազդեցությունը հարկային քաղաքականության վրա:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նյու-Յորքում անցկացվող միջոցառմանը մասնակցել են աշխարհի տարբեր պետությունների քաղաքական գործիչներ, հարկային քաղաքականության և վարչարարության համար պատասխանատու անձինք, դիվանագետներ, գիտնականներ և մտավորականներ: Միջոցառման շրջանակում կազմակերպված պանելային քննարկումների և պլենար նիստերի ընթացքում մասնակիցները քննարկել են կայուն զարգացման նպատակների ֆինանսավորման համար հարկային լծակների կիրառությունը, հարկային վարչարարության անհատականացումը, սերնդեսերունդ ժառանգվող պետական պարտքի ազդեցությունը, կլիմայի փոփոխությունների դեմ պայքարի ֆինանսավորումը և այլ թեմաներ:

Պանելային քննարկումներից երկուսին հանդես է եկել նաև ՀՀ պատվիրակը՝ ներկայացնելով կայուն զարգացման նպատակների իրագործման ոլորտում հայաստանյան զարգացումները և արձանագրված առաջընթացը: Միաժամանակ, միցոցառման մամուլի ասուլիսների ժամանակ ՊԵԿ ներկայացուցիչները անդրադարձել են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ Հայաստանում իրականացվող տեխնիկական աջակցության ծրագրերին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ ՊԵԿ կողմից մշտապես բարձր է գնահատվել և գնահատվում միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես, հարկային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառմանը մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին բարձրացնել ՀՀ ՊԵԿ-ում կատարվող համապատասխան աշխատանքների որակը, նույնականացնել լավագույն միջազգային փորձը՝ ՀՀ-ում ներդրելու նպատակով, ներկայացնել և ավելի ճանաչելի դարձնել Հայաստանի փորձը միջազգային փորձագիտական հանրույթում, հաստատել միջազգային կապեր համապատասխան ոլորտի օտարերկրյա գործընկերների և փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աշոտ Մուրադյան

Վահան Չարխիֆալակյան

21.11.2023թ